ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՀՏԴ 81՝28
DOI: 10.56246/18294480-2023.15-26

ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի տնօրեն,
ԳՊՀ դասախոս,
բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
էլփոստ՝ viktorkatvalyan@mail.ru

Բարբառային հայերենի շարահյուսական իրողությունները գրեթե ուսումնասիրված չեն: Հայերենի բարբառներին նվիրված առանձին մենագրություններում կարելի է գտնել միայն որոշ ակնարկներ շարահյուսական յուրահատկությունների վերաբերյալ: Այս աշխատանքում բարբառային շարահյուսական երևույթները դիտարկում ենք Բայազետի բարբառի օրինակով: Բարբառներում շարահյուսական առանձնահատկություններ կան ինչպես կապակցման միջոցների դրսևորման, շարադասության, այնպես էլ նախադասության անդամների ու նախադասությունների արտահայտության ոլորտներում: Կապակցման միջոցների առումով՝ բարբառային խոսքում լայն տարածում ունեն թվային համաձայնությանը վերաբերող յուրահատկություններ, որոնք առավելաբար դրսևորվում են ենթակա-ստորոգյալ, որոշիչ-որոշյալ կապակցություններում: Շարադասական յուրահատկություններ հանդես են բերում թե՛ անվանական, թե՛ բայական անդամների լրացումները, ընդ որում՝ խոսքը հիմնականում վերաբերում է գերադաս անդամի նկատմամբ դրանց դիրքին: Նախադասության մեջ արտահայտության առանձնահատկություններ հանդես են բերում և՛ ենթական ու ստորոգյալը, և՛ երկրորդական որոշ անդամներ: Կան նաև նախադասությունների արտահայտությանը վերաբերող իրողություններ /միակազմ նախադասությունների, հավելական ու միջանկյալ նախադասությունների մեծ գործածականություն/: Գրական լեզվի համեմատությամբ՝ բարբառային խոսքում շարահյուսական իմաստների արտահայտությանը գործուն մասնակցություն ունեն այլ միջոցներ ևս (բանաձևային կառույցներ, կրկնություն, հնչերանգ, ժխտում և այլն): Բարբառային խոսքի անկաշկանդությունը երբեմն ի հայտ է բերում քերականական ընդունված կաղապարներով չբացատրվող իրողություններ:

Բանալի բառեր՝ *համաձայնություն, կապակցություն, նախադասության անդամ, ստորոգյալ, բացահայտիչ, պարագա, խնդիր, կրկնություն, հնչերանգ, ժխտում:*

Ներածություն

Հայ իրականության մեջ բարբառների շարահյուսական յուրահատկությունների ուսումնասիրություն ու նկարագրություն, կարելի է ասել, գրեթե չի կատարվել: Խնդրին չեն անդրադարձել ընդհանուր բարբառագիտական աշխատությունների հեղինակները (Հ. Աճառյան, Ա. Ղարիբյան, Ա. Գրիգորյան), առանձին բարբառային միավորների նվիրված մենագրությունների հեղինակների մեծ մասը (Հ. Աճառյան, Մ. Ասատրյան, Հ. Մուրադյան, Վ. Պետոյան, Ք. Մադաթյան, Ռ. Մարկոսյան, Ա. Լուսենց, Թ. Դանիելյան և այլք): Բարբառների դասակարգման ոչ մի տարբերակում անդրադարձ չկա շարահյուսական իրողություններին, այդպիսիք խիստ սակավ են ընդգրկված Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում[1]: Մեզ հայտնի չեն բարբառային հայերենի շարահյուսական իրողություններին նվիրված հետազոտություններ, հրապարակված հոդվածներ, կարդացված զեկուցումներ: Համանման իրավիճակ է առկա ռուս բարբառագիտության մեջ, որտեղ բարբառագիտական շարահյուսական ուսումնասիրությունների պակասը բացատրվում է նրանով, որ հնչյունաբանական և ձևաբանական բարբառային տարբերությունների համեմատ ռուսերենի բարբառներում շարահյուսական տարբերությունների քանակը աննշան է, ընդհանուր տարածում չունեցող շարահյուսական իրողությունները բարբառներում սակավ են[2]: Թերևս համանման ըմբռնումով պետք է բացատրել նաև բարբառային շարահյուսական հատկանիշների հետազոտման բացակայությունը հայ բարբառագիտության մեջ:

Այնուամենայնիվ, հայերենի բարբառներին նվիրված որոշ մենագրություններում կարելի է գտնել ակնարկներ շարահյուսական որոշ իրողությունների վերաբերյալ: Այսպես, Ս. Բաղդասարյան-Թափալցյանը Մշո բարբառի նկարագրությանը նվիրված իր աշխատության մեջ «Շարահյուսական դիտողություններ» վերնագրված երկու էջից էլ պակաս մի հատվածում առանց մեկնաբանությունների արձանագրում է այնպիսի իրողություններ, ինչպիսիք են՝ ենթակայի և ստորոգյալի թվային անհամաձայնություն (յես նըստուգ էնք), նպատակի պարագան՝ անորոշի փոխարեն ըղձականի ձևով (էգավ ախչիգ տանէր), անցյալ կատարյալը անորոշ դերբայի փոխարեն (չըկառցան

---

[1] Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 141 էջ:

[2] Տե՛ս Русская диалектология, под ред. Н.А. Мещерского, Высшая школа, М., 1972, էջ 207:

խըմէցին), ըղձականի փոխարեն (չըթօրգէց յես խօսացի), անցյալ վաղակատարի փոխարեն՝ հարակատարը (ընդոնք կերած է)[3]: Կարնո բարբառի նկարագրության հեղինակ Հ. Մկրտչյանը բարբառի շարահյուսական իրողություններին անդրադառնում է երեք պարբերությամբ՝ փաստելով, որ բարբառի շարահյուսական իրողությունները զգալիորեն նման են գրական լեզվի համապատասխան երևույթներին: Հեղինակը վկայում է, որ Կարնո բարբառում ստորոգյալը սովորաբար նախադասության վերջում է (Սողոմոն Իմաստունին կնիգը սուդ հիվանդ կէղնի, հէքիմին սիրէ կը), իսկ ուղիղ խնդիրը սովորաբար ստորոգյալից առաջ է (կէրթա մաճը վէրցընէ կը): Նշվում է նաև, որ թվականների հետ գործածվում է եզակի գոյական (հինգ տուն), և շատ են բակառությունները (հաչքէրը ցավի կը. շադ կանաչ կան)[4]: Շարահյուսական ավելի ընդարձակ դիտարկումներ գտնում ենք Ա. Հանեյանի «Տիգրանակերտի բարբառը» աշխատության «Շարահյուսական դիտողություններ» հատվածում[5]: Փաստելով, որ Տիգրանակերտի բարբառի շարահյուսական համակարգը ընդհանուր առմամբ համընկնում է արդի հայերենին՝ երևան հանելով առավելաբար արևմտահայերենին բնորոշ հատկանիշներ, Հանեյանը առանձնացնում է բարբառի մի շարք առանձնահատկություններ, ինչպես՝ միակազմ նախադասությունների սակավություն (դրանք կան առածներում և ասացվածքներում), բարդ համադասական նախադասության բաղադրիչների կապակցություն շարահարությամբ, ստորադաս նախադասության կապակցություն շարահարությամբ, *և, ու* շաղկապների բացակայություն, ուղիղ խնդրի ուղղականաձև գործածություն, տեղի պարագայի դրսևորում հայցականով (ինքը համարում է ուղղական), սեռականով ենթակայի գործածություն, կապային կառույցների դիմաց առանց կապերի գործածության միտում (Ազնըվին քացինք), անձնական դերանվան կրկնությամբ՝ անդրադարձություն (Թուն քըզի ի՞նչ գէնիս՝ քեզ ու քեզ), մարմնի զույգ անդամների հոգնակիի հետ՝ եզակի ստորոգյալ (անգըջնիրսի գըցավա): Էդ. Աղայանը Մեղրու բարբառին նվիրված աշխատության մեջ մեկ էջի շրջանակում անդրադառնում է շարադասությանն ու շարահյուսությանը: Նշելով, որ չկան մեծ տարբերություններ գրականից՝ Աղայանը փաստում է, որ բարբառում ուղիղ խնդիրը սովորաբար դրվում է ստորոգյալից առաջ, մարմնի զույգ ան-

[3] Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 189-190:
[4] Տե՛ս Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, էջ 100-101:
[5] Տե՛ս Ա. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 156-160:

դամները, հոգնակի թիվ ունենալով, գործածվում են եզակի ստորոգյալի հետ (ակնարը ցըվէս ի), *օնիմ* բայի հետ ենթական դրվում է՝ տրականով (ինձ մի ձի օնիմ), էական բայը տրականով ենթակայի հետ նշանակում է ունենալ (ինձ մին հընգէր ը *լա*), միավորյալ նախադասություններում անցյալ կատարյալն ու հարակատար ներկան եզ. 3-րդ դեմքում կարող են օժանդակ բայ չունենալ (Մին հէտ ախպէրըս գէցալ Ուրդվ*ա*թ, մին ջ*ո*ւրէ առալ, բիր*ա*լ. Գ*ո*ւլի իկ՝ած, ուխչարնէն կէրած, փախած), ստորադասական *հօր* (որ, որպեսզի) շաղկապը հաճախ չի դրվում (Գինէս ի Ռէվան՝ սըվուրի)[6]: Այս աշխատանքում փորձում ենք կարևորել բարբառային շարահյուսական իրողությունները՝ ավելի լայն անդրադարձ կատարելով դրանց Բայազետի բարբառի օրինակով:

Շարահյուսական համաձայնության յուրահատկություններ բարբառային խոսքում

Վերը բերված իրողությունների մեծ մասը հանդիպում է նաև Բայազետի բարբառում: Այդպիսիք վերաբերում են և՛ կապակցության միջոցներին, և՛ նախադասության անդամների արտահայտությանը, և՛ բարդ նախադասության բաղադրիչներին, և՛ շարահյուսական այլ իրողությունների: Նախ և առաջ՝ նկատելի են թվային համաձայնությանն առնչվող որոշ յուրահատկություններ: Այսպես, բարբառում բայի հոգնակի թվի երկրորդ դեմքով արտահայտված ստորոգյալի հետ գործածվում է անձնական դերանվան եզակի թվով ձև (Դ՛ու յեփ էկաք. Դ՛ու դոր էք էթում), մինչդեռ դերանունը ունի՛ հոգնակի թվի ձև, որը գործածական է, օրինակ, բազմակի ենթակաների կազմում (Մենք ու դ՛ուք հիրար լավ էլ խասկընում ենք. Մեր խըմար դ՛ուք ու ընդոնք մէկ էք. Գ՛էվօն, Տիկօն ու դ՛ուք կըմընաք տունը): Եթե միակի ենթակայի դեպքում դերանվան թվի արտահայտությունը կարևոր չէ, որովհետև ստորոգյալը իր հոգնակի ձևով լրացնում է բացը, ապա բազմակի ստորոգյալի պարագայում հոգնակի ստորոգյալը այլևս չի նշանակում նաև դերանվան հոգնակիություն, ուստի երկրորդ դեմքի դերանվան հոգնակիությունը անհրաժեշտաբար ստանում է ձևային արտահայտություն: Հարցական *վորը* (ով) դերանունը ևս հոգնակի ստորոգյալի հետ գործածվում է եզակի թվով (Լը տե՝ էտ վորն են դ՛ուռը կայնուկ[7]), ընդ որում՝ *ով* իմաստով այս դերանու-

---

[6] Տե՛ս Է. Աղայան, Մեղրու բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1954, էջ 247:

[7] Այս և հետագա օրինակներում ձեռնպահ ենք մնում Բայազետի բարբառի շրթնային *ա*-ն գրային հատուկ նշանով արտահայտելուց:

նը հոգնակի թվի ձև չունի, իսկ *որը* դերանվան իմաստով ունի *վորդոնք* (որոնք) հոգնակին: Բարբառում քանակ ցույց տվող որոշիչների հետ միշտ եզակի որոշյալ է գործածվում (շատ մարդ, խինգ ախճիկ, էրկու քար): Հետաքրքրական է, որ երբ նման որոշյալը արտահայտված է շնչավորի անունով, իբրև ենթակա հանդես գալու դեպքում սովորաբար կապակցվում է հոգնակի ստորոգյալի հետ (Իրեք խօքի նըստան գ՛ացին. Էրկու շուն կըռվան), բայց երբ որոշյալը արտահայտված է անշունչ գոյականով, ստորոգյալը դրվում է եզակի թվով (Խինգ ավտօբուզ էկավ. Իրեք գ՛իրք կուրե): Բայազետի բարբառում ևս մարմնի զույգ անդամները, հոգնակի թիվ ունենալով, գործածվում են եզակի ստորոգյալի հետ (Թեվերըս թուլցավ): Ինչ խոսք, բակառության դեպքերը սովորական են նաև Բայազետի բարբառում (ժողովուռթը էկան լըցվան. Գոմերը մացե ցաձըր):

Շարադասության յուրահատկություններ բարբառային խոսքում

Բավականին տարածված են շարադասական յուրահատկությունները: Անսովոր չէ բազմակի որոշիչների հետադաս կիրառությունը, որն ուղեկցվում է խոսողի զգացական հնչերանգով (Դ՛ուռը բ՛ասվավ, նեռս մըտավ մէ ախճիկ՝ խօրօտ, բօյօվ, ծամէրօվ. Էսա մեր գեղի ախճըգները՝ սեվ, գ՛էշ, բ՛արակ, ի՞մալ ըսկի չեն փօխվում): Հատկացուցիչը նույնպես կարող է հետադաս լինել (Ուրեմը, խառնիսն ա գիվ*ա* թէ մեր), տարածված է շաղկապների գործածությունը նախադասության ոչ սկզբնային դիրքում (էտի էկավ՝ մեր կօվերը վոր կըթէր. Քամին վոր փըչեց, սըռը վոդներըս տարավ): Բացահայտյալ-բացահայտիչ կառույցը կարող է ընդմիջվել կապով (էտ քըսան ձ՛ուն վոր ջ՛առթում են ամանի մէչը՝ թասի, լ*ա*գ*ա*նի, ձ՛եռօվ լա՜վ հարում են): Հետաքրքրական է, որ բացահայտիչը կարող է արտահայտվել նախադասությամբ (էն անտէրը՝ մաշալ են ասում, մաշալը շըշէրի վըրէն զ*ա*նուկ, էթում ինք. Մէ վախտ էտենց հընցավ, ես ասեմ մէ տարի, դու ասա էրկու տարի, ես ասեմ էրկու տարի, դու ասա իրեք տարի): Որոշյալ-որոշիչ կառույցը կարող է ընդմիջվել բայով (Մէ մառթ էկավ՝ բօյօվ, բուսօվ, բեղէրօվ. Մէ շոր էր խաքե՝ լէն, անհառթուկ, խընգըռուկ) և այլն: Նախադասության այլ անդամներով կարող են ընդմիջվել նաև զուգաբայական հարադրությունները (Գ՛ացե Մառտունա կընիկ ա բ՛էրե. Տարե մէ աման ճաշ ա տըվե բիձին):

Տեղի, ժամանակի, ձևի, չափի, պատճառի, հիմունքի, միասնության պարագաները որպես կանոն նախորդում են ստորոգյալին (Գեղը էլ մառթ չըմացե. Ըտու կողօվ հընսնել չըլնի. Հէսօր ըսկի ախօտ չունեմ. Բօռբըռալէն գ՛ընաց էտ յանը. Հազար անքամ ասի՝ մի արա. Քօ պաճառօվ գ՛ոռձից յետը-

ցա. Քօ ձ՛էնից քեզի ճանչըցա. Քօ ասէլով՝ մըկա հըմէն ընդե յեն. Հընգերնէ-
րով մէ ժամ ա՝ գ՛ացած), իսկ նպատակի պարագան հետադաս է կիրառվում
(Կընանիքը վէդրօնէրով էթում ին ջ՛ըրի. Հէլան սարը բ՛անջըրի): Ի դեպ, երբ
տեղի պարագան դրսևորվում է տեղափոխություն ցույց տվող բայերի հետ և
մատնանշում է հանգման կետ, ավելի հաճախ հետադաս է գործածվում
(Էթում եմ Քավառ. Տանում եմ դըբռօց. Գացի, գ՛ացի, խասա Գըռիձոր), իսկ
երբ մատնանշում է մեկնակետ, նախադաս է գործածվում (Հէրէվնա մառթ ա
էկե. Տընից փախե գ՛ացե):

Բայազետի բարբառում ուղիղ խնդիրը, որ ձևավորումով հետևում է ար-
ևելյան բարբառներին ու գրական լեզվին, նույնպես որպես կանոն նախոր-
դում է ստորոգյալին (Տըղէն բօլ էլ խընձոր ա բ՛էրե. Էտ ծառը մի կըդրա.
Թուխտը դ՛ի տեղը դ՛ուս արի. Հընգերույուտ բ՛ե տէնանք, տըղա ջան. Ախ-
պօրը խէտը տարավ Հըռուսաստան): Շնչավորի անվան դեպքում ուղիղ
խնդիրը ուղղականաձև է արտահայտվում, եթե դրված է անորոշ առումով
(Էնի ախպէր չըտէսե. Գ՛ացե Մառտունա կընիկ ա բ՛էրե. Սարուխանցի առ-
նում պապիկըս. Գ՛էվօյ տըղէն սարը գ՛էլ ա զ*ա*նե. Գագօն հառավոտ խոզ ա
մօռթում): Կենդանիների անունները որոշյալ առումով գործածվելիս կարող
են արտահայտվել և՛ տրականաձև (Տիկօն շանը խատըցըրեց. Խավէրին քը-
շա, արա նեռս), և՛ ուղղականաձև (Մէրէն կօվը կըթեց, էկավ. Մէ հէլի էտա
աքլօրը մօռթա, հա՛): Միջոցի, վերաբերության խնդիրները սովորաբար
ստորոգյալին նախորդում են (Բ՛ախօվ էտա թըփերը զ*ա*ն, մի թող աճեն. Քօ
ինշ գ՛ոռծն ա, վոր ըտու մասին խօսում ես), իսկ հանգման, անջատման
խնդիրները ավելի հաճախ հաջորդում են ստորոգյալին (Էսա թուխտը տու
հարէվնիտ. Մօտկըցի ընձի՝ ասեմ. Հազիվ պըռծա ըտու ձեռից. Զըվզում եմ
ըտուց):

Նախադասության անդամների արտահայտության յուրահատկություններ

Բարբառային խոսքում որոշ յուրահատկություններ կան նախադասության անդամների արտահայտության առումով: Ինչպես մի շարք այլ բարբառներում, Բայազետի բարբառում ևս ենթական *ունեմ, կամ, հըլնեմ* (լինել) բայերի կողքին հաճախ արտահայտվում է տրական հոլովով (Ընդոնցը էրկու բօստան ունին. Մեզի լավ տավար-մալ կար. Հ՛առէչ, ասում ին, Նավօյ Սարօյն հոռթիկ հ՛էլե): Այսպիսի կառույցներում *կամ* բայի իմաստով գործածվում է նաև *եմ* բայը (Էտ գ՛ախ մեզի էրկու կօվ էր): *Եմ* բայի գործածություն

կա իմաստով, ինչը, ի դեպ, բնորոշ էր նաև գրաբարին, նկատվում է այլ կառույցներում ևս (Մէ խատ ըսենց ճըպոթ էր ձ՛եռըս. Թալվի մէչը էսենց առանցին տեղ էր, Կուխնի յէր, ընդե յէլ բալկոն էր դ՛ուռը):

Արտահայտության յուրահատկություններ ունի նաև ստորոգյալը: Այսպես, գրական լեզվի բայական բաղադրյալ ստորոգյալի դիմաց բարբառում հանդես է գալիս կառույց՝ երկու դիմավոր բայերով (Հ՛ըմէն մառթ չըկանա սարքա. Յես էլ եմ ուզում գ՛ամ. Ուզում ի բ՛էրի՝ չէլավ): Շատ տարածված է վերլուծական ժամանակաձևերի միայն դերբայի գործածությունը երրորդ դեմքում (Կայնե ընձի ասում՝ փողերըտ խան. Մէկ էլ տէնանք՝ մէ էշ մըռութը տընգե, գ՛ալում մեր յանը. Վոր չըգ՛ացի տէսա՝ Յենգոյ դ՛ուռը դ՛էզերը զ*ա*նուկ, աֆտոնները կայնուկ, բըրիշկէքը կայնուկ. Հէլած էկած դըբռոցի հ*այա*թը, թեվերը կանթած կայնած): Մյուս կողմից՝ ստորոգյալի հանգույցը կարող է կրկնվել (Մօրական պապիկըս դուք*ա*նչի յա հըլնում ա. Տընից դ՛ուս էր հէլէր էր. յես եմ բ՛էրէր եմ):

Տեղի պարագան բարբառում արտահայտվում է հայցականով (Թալվէն, հիշում եմ, մատակ կար, կօվ կար), ժամանակի պարագայի հետաքրքրական դրսևորում կա *խըթ* նախադրությամբ և անորոշ դերբայով (Խըթ զ*ա*նելը՝ մատակը վոտը վէրցեց), կարելի է վիճակի պարագա համարել հետևյալները՝ *Բ՛ըքին, ձ՛անը* սարերն հ՛էլա. *Յըռտին* մէ բ՛արակ սառուշկով հէլե դ՛ուս: Հետաքրքրական է, որ դիմավոր բայաձևերը կարող են գործածվել այլ խոսքիմասային արժեքով և ձևավորել կամ հանդես գալ իբրև պարագա (*Գ՛ըլնի* մէ ժամ կայնած, հառէչ չեն էթում. *Մընաց,* էտի կընգա խէտ բ*ա*րիշավ, տուն ու տեղ դ՛ըրեց): Երբեմն պարագան կարող է արտահայտվել նկարագրական եղանակով (Ըռնո-Դըռնօն *վորը մեխկ գալուց, վորն էլ խըխճալուց* ավելը ծակի դ՛էմից վէրցեց):

Նախադասությունների, խոսքի ձևավորման յուրահատկություններ

Բարբառային խոսքում անսովոր չեն միակազմ նախադասությունները (Բ՛ուք, ձ՛ուն, ինչ ձ՛ուն ա, վոր չեմ կանա ասե. Մէշու խոտ վառէցի, տաքցա, անօթի, ծարավ, չըկիմիշա, վոր բոխճից մէ խաց խանի ուտի. Հօքնե՞լ... Ինչի՞ց հօքնինք, խաղալո՞ւց. Մէկ էլ տէսանք՝ հէլե գ՛իշերվա կէսը):

Բարդ համադասական նախադասությունների մեջ նկատելի է հավելական հարաբերությամբ նախադասությունների առկայությունը, որոնք բարդության նախորդ մասի վերաբերյալ տալիս են լրացուցիչ բացատրություն, գնահատողական, վերաբերմունքային հավելում (Էնի չէր կանի փախնէր, համ էլ փախնելու տեղ էլ չկէր. էտ կընգան բ՛էրում են գ՛եղը, շատ խօրօտ էր,

խըրեղեն էր. Քանի-քանի էտենց ջայէլ-ջիվան տըղէրք գ՛ացին օսմանի կըռիվ, էլ յետ չէկան, սեվ գ՛էր օսմանի վըրէն, վոր սեվ բ՛էրեց մեր վըրէն. Տէնում են բօլ էլ յեռթ ա, բ՛այց դը ի՞նչ պըտի անին): Շատ գործածական են նաև միջանկյալ նախադասությունները (Մամիկըս հ՛ըմա վէրցեց ըսենց ասավ՝ (ամօթ էլ ա ասել) տօ լավ արավ, քօ խօր կօտը քաքեմ. Էտենց մէ դան մեր Կօսմօսը (հավէլի անունն ա. Գագարինի թըռնէլու տարին ա ծընվե, ասած Կօսմօս) հըլնում ըստօլբէն, վոր ըշՀօտչիկի թիվը հիշկա):

Այլ իրողություններ

Թե՛ խոսակցական, թե՛ բարբառային խոսքի բնորոշ հատկանիշներից է բանաձևային կառույցների մեծ գործածականությունը: Առավելաբար հանդես գալով նախադասության սկզբում՝ նման կառույցները ունենում են նախապատրաստական նշանակություն տարբեր իմաստներով, ինչպես՝ էտ էլ շընօրակալի շօռվէ՞ն էր. բ՛էրեց թալեց դ՛ուռը գ՛ընաց (գնահատողական), Խաչը իմն ա՝ զօրութունը յես եմ գիդում, էտի թըմբըրօղ լիզու չէ (վստահություն), Արի գ՛ընի՝ ատամը քաշա, մենք էթանք (հորդոր), Էնենց վոր՝ գ՛ընա նըստի տեղըտ (եզրափակում), Յես էլ ասում եմ՝ էս դո՞ր եք, չէք էրէվում (անակնկալ բացահայտում), Կա, չըկա՝ էտի հըմէն ինչ էլ գիդում էր (ենթադրություն) և այլն: Բանաձևային կառույցները երբեմն կաղապարներ են, որոնք ըստ իրադրության լրացվում են համապատասխան բառերով: Օրինակ, գործածական է *վոր չը (դիմավոր բայ) + դիմավոր բայ* կաղապարը (Վոր չըգ՛ացի տէսա՝ սաղ տունը բ՛առցած աքլօրի, սիռտըս կայնավ. Վոր չըխանի կառթացի՝ աշխարքը տըվին ընձի), այն արտահայտում է անսպասելիության գաղափար:

Բարբառային խոսքում մեծ գործածականություն ունեն շարահյուսական-ոճական այնպիսի միջոցներ, ինչպիսիք են կրկնությունը, հարցական հնչերանգը, ժխտական կառույցների գործածությունը և այլն: Կրկնությամբ կարելի է արտահայտել՝ իմաստի սաստկացում (Մէ բօռալ ա բօռում, մէ բօռալ ա բօռում. է՛լ գ՛աթօվ, է՛լ ուտէլիքօվ ճամփու յին դ՛ըրած. Մէ փախնել եմ փախնում, մէ փախնել եմ փախնում. Հանգըժներս էնենց ին ցավում, էնենց ին ցավում), շարունակություն (Հընգընէլօվ հ՛ընէլօվ խասա գ՛ոմերը, խասա գ՛ոմերը, խացը դ՛ըրէցի, մէշու խոտ վառէցի), տարբերակում (Մառթ կա՝ տըսնըխինգ հ՛էրես ա անում, մառթ կա՝ տըսնութ հ՛էրես ա անում): Կրկնությունը կարող է զուգորդվել լրացուցիչ տեղեկությամբ (Սարուխանցի առնում պապիկըս, Սարուխանցի յա առնում ա, Զաքօյենց տընէրից են), կարող է ներկայացվել քերականական զուգաձևությամբ (Մէշու լուցկի վառէցի թալէ-

ցի, վառի թալի, վեռչը լավ էր, ժողովրդի ձ՛էնն էկավ): Ժխտական հարցումը կարող է նշանակել հաստատում (Ասենք թէ՝ մէ հարուր քըսան պաճ ա չէ՞ էտ փալխավէն՝ ջ՛առթում են քըսան խատ ձ՛ու), դժգոհություն (Դ՛ու գ՛աս իմ մէ թալվա տավար-մալը կըթես, մէ պուտ կաթ չիտա՞ս իմ ճըժին), անհրաժեշտություն (Դըսից էկար՝ շորըտ չըփոխե՞ս), ժխտում (Հառէչ ժամանակ խօ հըմընի տունը մըկավա նըման կըրանթ չըկէ՞ր): Հաստատական բնույթի նախադասության մեջ հարցումը կարող է նշանակել ժխտում (Ճիժը խաղալուց գ՛օքնի՞. Վո՞րը ռիսկ կաներ՝ մըդնէր խանէր. Մըկավա ճըժերը հընչի ջոչի լըսո՞ւմ են):

Բարբառային խոսքի անկաշկանդությունը երբեմն ի հայտ է բերում քերականական ընդունված կաղապարներով չբացատրվող իրողություններ: Օրինակ, հանդիպել է այսպիսի նախադասություն՝ «էտենցութունօվ խասա Բուռդակօյին են ասում, ինչ են ասում՝ այտե»: Թվում է՝ ցուցականով արտահայտված անդամը պետք է նախորդեր ավելի կոնկրետ իմաստ ունեցող արտահայտությանը, մինչդեռ ունենք հակառակ պատկերը: Նկատված է, որ հնարավոր չէ անձնական, մասամբ և ցուցական դերանուններով արտահայտված բացահայտիչի և բացահայտյալի տեղերը փոխել[8] (ինչպես այլ դեպքերում՝ *Արամը՝ իմ հընգերը – իմ հընգերը՝ Արամը*), այսինքն՝ վերը բերված նախադասության մեջ *այտե* ցուցական դերանունը բացահայտիչ չէ: Պետք է կարծել, որ գործ ունենք խոսողի մտապատկերում հաջորդող միավորի՝ նախորդից ավելի շուտ առաջացման երևույթի հետ: Դժվար մեկնաբանելի տարբեր կառույցներ կան: Օրինակ՝ «Ջայէլ-ջայէլ մեռավ» նախադասության մեջ ստորոգյալի լրացումը չի կարող համարվել ժամանակի կամ ձևի պարագա, մանավանդ՝ չի կարող պատասխանել *ինչպես* կամ *երբ* հարցերին: Թերևս հարկ լինի համարել վիճակի պարագա: Կամ՝ «Պընչէ թըռուկ խէրն ա» (հորը շատ նման է) նախադասության մեջ *պընչէ թըռուկ*-ը որևէ կերպ չի կապակցվում *խէր* ստորոգելիի հետ: Նման դեպքերում թերևս հարկ լինի վերականգնել կրճատված կառույցը և ըստ այդմ մեկնաբանել:

Եզրակացություն

Բարբառային լեզվի շարահյուսական համակարգը ունի բազմազան հետաքրքիր իրողություններ, որոնք կարիք ունեն հանգամանալից հետազոտության: Բարբառներում շարահյուսական առանձնահատկություններ դրս-

[8] Տե՛ս Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, էջ 208:

ևորվում են ինչպես կապակցման միջոցների դրսևորման, շարադասության, այնպես էլ նախադասության անդամների ու նախադասությունների արտահայտության ոլորտներում: Բարբառային խոսքում շարահյուսական իմաստների արտահայտությանը գրական լեզվի համեմատությամբ ավելի գործուն մասնակցություն ունեն այլ միջոցներ ևս (բանաձևային կառույցներ, ինչերանգ, ժխտում և այլն): Ընդ որում, եթե դրանց մի մասը կարելի է մեկնաբանել գրական լեզվի իրողությունների նկարագրման միջոցներով ու եղանակներով, ապա մի մասն էլ պետք է մեկնաբանվեն այլ տրամաբանությամբ ու միջոցներով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բադիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, 858 էջ:
2. Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1954, 407 էջ:
3. Բաղդասարյան-Թափալցյան Ս., Մշո բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 277 էջ:
4. Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 141 էջ:
5. Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 230 էջ:
6. Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, 191 էջ:
7. Русская диалектология, под ред. Н. А. Мещерского, Высшая школа, М., 1972, 304 էջ:

ON SOME SYNTACTIC CHARACTERISTICS OF ARMENIAN DIALECTS

KATVALYAN VIKTOR

Doctor of Philology, Associate Professor

Director of the Language Institute named after H. Acharyan of NAS RA

GSU Lecturer

e-mail: viktorkatvalyan@mail.ru

The syntactic features of Armenian dialects are almost unstudied. In separate monographs dedicated to Armenian dialects, only some hints about syntactic peculiarities can be found. In this work, we examine dialectal syntactic phenomena on the example of Bayezet dialect. In dialects, syntactic features manifest themselves in the means of syntactic connection, word order, as well as in the expression of sentence members. Regarding the means of syntactic connection, in dialectal speech, features related to agreement in numbers are widely spread, mainly in combinations such as subject-predicate, attribute-modifier. The syntactic features of the additions of both nominal and verbal members are also related to their position in relation to the main member. In a sentence, both the subject and the predicate, as well as some secondary members, have

specific features of expression. There are also realities associated with the expression of sentences, including the extensive use of simple sentences and introductory clauses. Compared with the literary language, other means (formulaic constructions, repetition, tone, negation, etc.) take a more active part in expressing syntactic meanings in dialectal speech. The ease of dialectal speech sometimes reveals realities that cannot be explained by commonly accepted grammatical schemes.

Keywords: *agreement, combination, sentence member, predicate, apposition, object, circumstance, repetition, intonation, negation.*

О НЕКОТОРЫХ СИНТАКСИЧЕСКИХ ХАРАКТЕРИСТИКАХ ДИАЛЕКТОВ АРМЯНСКОГО ЯЗЫКА

КАТВАЛЯН ВИКТОР
Доктор филологических наук, доцент
Директор Института языка НАН РА имени Г. Ачаряна,
Преподаватель ГГУ
электронная почта: viktorkatvalyan@mail.ru

Синтаксические реалии диалектов армянского языка почти не изучены. В отдельных монографиях, посвященных армянским диалектам, можно найти лишь некоторые намеки на синтаксические особенности. В данной работе мы рассматриваем диалектные синтаксические явления на примере диалекта Баязета. В диалектах синтаксические особенности проявляются как в средствах синтаксического соединения, порядка слов, так и в выражении членов предложения и предложений.

Что касается средств синтаксического соединения, то в диалектной речи широко распространены особенности, связанные с согласованием чисел, проявляющиеся в основном в сочетаниях типа подлежащее-сказуемое, определение-определяемый. Синтаксические особенности дополнений как именных, так и глагольных членов связаны также с их положением по отношению к главному члену. В предложении как подлежащее, так и сказуемое, а также некоторые второстепенные члены имеют особенности выражения. Существуют также реалии, связанные с выражением предложений /большое употребление односоставных, а также вводных предложений/. По сравнению с литературным языком другие средства (формульные конструкции, повтор, тон, отрицание и др.) принимают более активное участие в выражении синтаксических значений в диалектной речи. Непринужденность диалектной речи иногда обнаруживает реалии, которые нельзя объяснить общепринятыми грамматическими схемами.

Ключевые слова: *согласование, сочетание, член предложения, сказуемое, приложение, объект, обстоятельство, повтор, интонация, отрицание.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.08.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 20.08.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: